ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 ապրիլի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

48
(2898)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՍԱՏԱՐՈՒՄ Է ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՋԱՆՔԵՐԻՆ

Գերմանիան սատարում է Եվրամիության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների բանակցային ջանքերին, որոնք խրախուսում են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկխոսությունը: «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ այս մասին հայտնել են ՀՀ-ում Գերմանիայի դեսպանատնից:

«Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ տարբեր դեսպանատների դիրքորոշումը ստանալու համար դիմել էր դեսպանատներ:

Ապրիլի 2-ին հերթական հարցումն էինք ուղարկել ՀՀ-ում Գերմանիայի դեսպան Վիկտոր Ռիխտերին՝ խնդրելով պատասխանել հետեւալ հարցերին. ո՞ր թվականի քարտեզներն է միջազգային հանրությունը համարում լեգիտիմ եւ առաջարկում է սահմանազատումն իրականացնել այդ քարտեզներով, ինչու՞ դեսպանը, որպես միջազգային հանրության վառ ներկայացուցիչ, չի գործադրում ջանքեր, որպեսզի Ադրբեջանը, որ 2021 թվականից օկուպացրել է ՀՀ ինքնիշխան տարածքները Սյունիքի, Գեղարքունիքի եւ Ջերմուկի հատվածներում, հետ քաշվի: Եթե գործադրում է ջանքեր, ապա ինչո՞ւ չկա հաջողություն:

ՀՀ վարչապետը մարտի 18-ին՝ Տավուշի մարզում բնակիչների հետ հանդիպման ժամանակ, հայտարարել էր, որ եթե 1 շաբաթվա ընթացքում սահմանազատման գործընթացը չսկսվի, այսինքն՝ տարածքները չհանձնվեն, ապա պատերազմ է սկսվելու: Դեսպանն ի՞նչ տեղեկություն ունի, արդյոք պատերազմը անխուսափելի՞ է, եւ եթե հարձակում լինի ՀՀ վրա, ինչպե՞ս կարձագանքի դրան միջազգային հանրությունը:

Մեր այս հարցերին ի պատասխան՝ ՀՀ-ում Գերմանիայի դեսպանությունից տվել են հետեւյալ պատասխանը.

«Գերմանիան հաստատակամ է՝ շարունակելու գործուն աջակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության շուրջ շփումներին եւ խաղաղության գործընթացին: Այս գործընթացի հիմքը հարավկովկասյան երկրների ինքնիշխանությունը, անկախությունը եւ տարածքային ամբողջականությունն են, նպատակը պետք է լինի տարածաշրջանում արդար եւ կայուն խաղաղությունը:

Հայկական եւ ադրբեջանական կողմերը մասնավորապես դաշնային կանցլեր Օլաֆ Շոլցի հետ Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում եւ փետրվարին Բեռլինում դաշնային արտգործնախարար Անալենա Բերբոքի հետ հանդիպմանը հաստատել են դեռեւս առկա խնդիրները խաղաղ միջոցներով լուծելու իրենց պատրաստակամությունը: Գերմանիան պատրաստ է ուղեկցելու նրանց համապարփակ բանակցված՝ խաղաղ կարգավորում տանող այս խիզախ ճանապարհին, զորօրինակ, որպես հյուրընկալ կողմ, ինչպես փետրվարյան հանդիպումներին էր: Բացի այդ, Գերմանիան սատարում է Եվրամիության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների բանակցային ջանքերին, որոնք խրախուսում են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկխոսությունը: Գերմանիան կարեւորում է նաեւ այն դերը, որ ստանձնել է Հայաստանում Եվրամիության առաքելությունը (EUMA)՝ ի նպաստ տարածաշրջանում կայունության եւ փոխվստահության ձեւավորման»:

2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո՝ մինչ այս պահը, Արցախը պաշտոնապես լքել է 115 հազար անձ, որոնցից 29 հազարը երեխաներ են: Հայաստանի Հանրապետությունն այս 30 տարիների ընթացքում՝ ամեն տարի, Արցախի կարիքների համար միլիոնավոր գումարներ է փոխանցել պետբյուջե: Տարեվերջին քննարկվում էր գումարի չափը, տարեսկզբին փոխանցվում էր Արցախ: 2023 թվականին նախատեսված էր Արցախին փոխանցել 144 մլրդ ՀՀ դրամ: Այս մասին ԱԺ-ում 2023 թ. պետական բյուջեի քննարկման ժամանակ հայտարարել էր էկոնոմիկայի նախկին նախարար Տիգրան Խաչատրյանը: Եթե այս թվին՝ 144 մլդ դրամին, գումարենք նաեւ Ճապոնիայի կողմից արցախահայերին տրամադրված 2 միլոն դոլարը, որը համարժեք է 820 մլն դրամի, ավելացնենք ԱՄՆ-ի կողմից տրամադրված 11 մլն դոլարը, որը համարժեք է 4 մլդ 716 մլն դրամի, նաեւ Եվրահանձնաժողովի կողմից փոխանցված 10.4 մլն եվրոյին համարժեք 4 մլդ 506 մլն դրամը, Լատվիայի կողմից հատկացված 350 հազար եվրոյին համարժեք 151 մլն դրամը, Շվեյցարիայի կողմից տրամադրված 1,5 մլն ֆրանկին համարժեք 675 մլն դրամը, Կանադայի կողմից տրամադրված 2,5 մլն դոլարին համարժեք 1 մլդ 25 մլն դրամը, կստացվի 155 մլդ 893 մլն դրամ: Սա դեռ ամենը չէ. փետրվար եւ մարտ ամիսներին փոխանցումներ նորից եղել են, իսկ այսօր կայացած վարչապետ Փաշինյան, ԵՄ եւ ԱՄՆ եռակողմ հանդիպումից հետո Հայաստանին է փոխանցվել 270 մլն եվրո ԵՄ-ից, 65 մլն դոլար՝ ԱՄՆ-ից: Հայաստան եկած այս ֆինանսական հոսքի արդյունքն այդպես էլ չի երեւում: Մինչ այսօր գեթ մեկ արցախցի պետությունից լիարժեք որեւէ օգնություն չի ստացել: Արցախից բռնի տեղահանվածների գրեթե 16 հազարը պետության անտարբերության պատճառով լքեցին Հայաստանը: Ոչինչ չի արվում գոնե մնացածին արժանապատիվ աջակցելու համար: Սպասենք՝ տեսնելու, թե հիմա ինչ կոռուպցիոն սկանդալներում կմխվեն այս գումարները:

«Ժողովուրդ» օրաթերթն իր աղբյուրներից տեղեկացավ, որ Հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել եւ հարցաքննվել առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Անցած տարի՝ օգոստոսի 2-ին, գրել էինք, որ հերթական ծանուցագիրն են նախապատրաստում. այս անգամ այն ուղարկելու են ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին: Վերջինս գնացել եւ հարցաքննվել է որպես վկա ու վերջ: Արսեն Թորոսյանից հետո նախապատրաստվում էին լսել գործող նախարար Անահիտ Ավանեսյանին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Թորոսյանի հարցաքննությունից հետո նախաքննական մարմինը փակուղի էր մտել: Ըստ էության, այդպես էլ եղավ: Առաջիկայում Քովիդ 2019-ի քրեական վարույթի գործով նախաքննության ավարտ կհայտարարվի: Հիշեցնենք, որ անցած տարի Հակակոռուպցիոն կոմիտեն ակտիվ կերպով հարցաքննության էր հրավիրում «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի աշխատակիցներին: Իսկ ի՞նչ քրեական վարույթի մասին է խոսքը: Ըստ քրեական վարույթով ձեռք բերված տվյալների՝ «ՀՀ-ում նոր կորոնավիրուսային վարակի (Covid-19) կանխարգելման, վերահսկման, բուժման այլ համալիր միջոցառումների» իրականացման ծրագրով ՀՀ կառավարությունը հատկացրել է ավելի քան 26 մլրդ ՀՀ դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Հիշյալ ծրագրի շրջանակում, ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. հրամանով, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության՝ «COVID-19»-ի ախտորոշման եւ բուժման դիմաց պետական բյուջեից փոխհատուցում ստացող, բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը, որում ներառվել է նաեւ «Մեդլայն Կլինիկ» ՍՊ ընկերությունը: ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանը հաճախ թիրախավորում է ուժայիններին՝ դատախազությանն ու քննչականին՝ մեղադրելով շոուներ կազմակերպելու համար:

Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում Տավուշի շուրջ տեղի ունեցող զարգացումները եւ արտաքին քաղաքական վերջին շրջադարձերը լուրջ կրքեր են բորբոքել: Բանն այն է, որ որքան էլ իշխանականներն իրենց հարցազրույցներում կամ լրագրողների հետ զրույցներում կրկնում են նույն թեզերը, ինչ Փաշինյանն է ասում, բայց իրականում նրա որոշումները ոչ միանշանակ են ընդունվում թիմում: ՔՊ-ականներից շատերը անորոշ վիճակում են, չգիտեն՝ ինչ դիրքորոշում հայտնեն այս կամ այն հարցի շուրջ, օրինակ՝ Տավուշի գյուղերի հանձման կամ էլ արտաքին քաղաքական կտրուկ փոփոխությունների մասով: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ առաջիկայում Նիկոլ Փաշինյանը կրկին գնալու է խորհրդարան՝ ՔՊ-ականների հետ հանդիպման: Իշխանականները հույս ունեն, որ գոնե այս հանդիպումների ժամանակ սպառիչ պատասխաններ կստանան Փաշինյանից, որը, սովորաբար, իր որոշումները գաղտնի է կայացնում, ու ՔՊ-ում միայն հաշված մարդիկ են նախապես իմանում: «Ժողովուրդ» օրթերթի տեղեկություններով՝ այս անորոշությունը սրել է իրավիճակը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում: Իշխանական պատգամավորներից ամեն մեկը փորձում է իրեն լիդեր կարգել ու իր գաղափարի շուրջ համախմբել մյուսներին, այլ կերպ ասած՝ թիմի ներսում իրենց թիմն են ստեղծում, որպեսզի ամրապնդեն իրենց դիրքերը:

ԶՐՈՒՅՑ

«ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՉՊԵՏՔ Է ԽԱՂԱՆՔ»

ArmLur.am-ը «Արդար Հայաստան» կուսակցության ղեկավար Նորայր Նորիկյանի հետ զրուցել է Հայաստան-ԵՄ-ԱՄՆ բրյուսելյան հանդիպման եւ ԵՄ անդամության թեկնածու դառնալու հարցի մասին:

-Պարոն Նորիկյան, գիտենք, որ Նիկոլ Փաշինյանը Բրյուսելում հանդիպելու է Ամերիկայի պետքարտուղարի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահի հետ: Իշխանությունները մթնոլորտ են ստեղծել, որ այս հանդիպումից պետք է շատ մեծ սպասումներ ունենալ: Ձեր դիտարկմամբ՝ ի՞նչ է տալու այս հանդիպումը հայկական կողմին:

-Իհարկե, արտաքին ֆոնը հենց այնպիսին է, որ հանդիպման հիմքում տնտեսական հարաբերություններն են եւ Հայաստանի դիմադրողականության մակարդակի բարձրացումը, բայց ես հեռու եմ այդ մտքից եւ խորը համոզմունք ունեմ, որ այս ձեւաչափով հանդիպումը չի կարող իր մեջ չպարունակել քաղաքական եւ ռազմաքաղաքական կամ աշխարհաքաղաքական կոմպոնենտ, եւ գրեթե բացառում եմ, որ տնտեսական զարգացման հեռանկարների մասին է լինելու հանդիպումը: Ակնհայտ է, որ շրջադարձային հանդիպում է, շատ կարեւոր. այո՛, համաձայն եմ այն գնահատականի հետ, որ սպասելիքներ են գեներացվել հանրության մոտ իշխանության եւ տարբեր այլ հոսանքների կողմից: Մենք կտեսնենք, թե ինչպիսի զարգացումներ կլինեն, բայց, իմ համոզմամբ, հավաքական Արեւմուտքը հերթական բաղադրիչն է օգտագործում մեր տարածաշրջանում իր դիրքերը ամրապնդելու, Հայաստանին որպես նոր հենարան դիտարկելու կամ, այլ կերպ ասած, Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելուն միտված ուրույն քայլ է իրականացնում: Թե ինչպիսին կլինեն զարգացումները, թե ինչպիսի դիմադրության կարժանանա այս գործընթացը, կպրենք, կտեսնենք, բայց որ այս հանդիպման հիմքում դրված են աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական շահեր, ակնհայտ է:

-Իսկ, ըստ Ձեզ, այս հանդիպումից հետո Հայաստանը ռազմական աջակցություն կարո՞ղ է ակնկալել:

-Նայած, թե ինչ ենք հասկանում՝ ռազմական աջակցություն ասելով. չեմ բացառում՝ Ֆրանսիայից ուղղակիորեն գալիս է կամ եկել է, կամ հնարավոր է՝ այլ բնույթի մատակարարումներ լինեն. ես չեմ կարող դա բացառել: Հնարավոր է, որ այս ձեւաչափի համատեքստում այլ երկրներից ռազմատեխնիկական աջակցություն ստացվի՝ Հայաստանի պաշտպանական համակարգի ուժեղացմանը միտված: Ես մի քանի անգամ ասել եմ՝ անկախ նրանից, թե ինչպիսի քաղաքական վարչակարգ կլինի Հայաստանում, բանակի հետ կապված հարցերում մենք իշխանություն, ընդդիմություն չպետք է խաղանք, ամբողջ խնդիրը պետք է միտված լինի բանակի մարտունակության ուժեղացմանը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԽՈՍՏՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է

ՈՐՊԵՍԶԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՈՒՐ ԼԻՆԻ

Բրյուսելում կայանալիք ՀՀ-ԵՄ-ԱՄՆ եռակողմ հանդիպմանն ընդառաջ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտարարել է, որ ԵՄ-ն խոստացել է ուս ուսի կանգել Հայաստանի կողմին եւ այսօր այդ խոստումը կատարում է: Ուրսուլա Ֆոն դեր Լայենն այս մասին ասել է Փաշինյան-Բլինքեն-Ֆոն դեր Լայեն հանդիպմանը նախորդած ասուլիսի ժամանակ:

Ֆոն դեր Լայենը նշեց, որ Հայաստանի հետ գործընկերության տեսլականը կյանքի կկոչվի Հայաստանի դիմակայունությանը նպաստելու ծրագրի միջոցով: «Մենք ներդրումներ կանենք, որպեսզի Հայաստանի տնտեսությունն ու հասարակությունն ավելի ամուր լինեն եւ ցնցումների նկատմամբ կայուն», - ասաց Եվրահանձնաժողովի նախագահը՝ նշելով 270 մլն եվրո դրամաշնորհի մասին, որը կօգնի հատկապես փոքր եւ միջին ընկերություններին:

Ֆոն դեր Լայենի խոսքով՝ ԵՄ-ն Հայաստանում ներդրումներ կանի հատկապես ենթակառուցվածքային նախագծերում, մասնավորապես՝ Սեւ ծովի էլեկտրական մալուխի նախագծում, ինչպես նաեւ վերականգնվող էներգիայի արտադրության մեջ:

Ուրսուլա Ֆոն դեր Լայենը ողջունեց Հայաստանի կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը եւ նշեց՝ ԵՄ-ն կուսումնասիրի նաեւ միջսահմանային տրանսպորտը, երբ պայմանները թույլ տան:

Եվրահանձնաժողովի նախագահը խոսեց աջակցության նոր փաթեթի՝ Հայաստանի համար Եվրոպայի տնտեսական եւ ներդրումային ծրագրի մասին: «Այն արդեն կես միլիարդ եվրո է մոբիլիզացրել ներդրումների համար: Սա հրաշալի նորություն է, եւ մենք կարող ենք ավելին անել: Ահա թե ինչու վերջերս գործարկեցինք ներդրումների համակարգման հարթակը, որպեսզի կարողանանք բացահայտել նոր նախագծեր եւ արագացնենք իրականացումը», - ասաց Ֆոն դեր Լայենը:

Եվրահանձնաժողովի նախագահը ողջունեց Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումներին միտված ջանքերը՝ չնայած երկրի առաջ ծառացած մարտահրավերներին, եւ վերահաստատեց՝ ԵՄ-ն կշարունակի աջակցել իրականացվող բարեփոխումներին խորհրդատվության, տեխնիկական աջակցության եւ ֆինանսավորման միջոցով:

Ուրսուլա Ֆոն դեր Լայենը հավելեց, որ չեն մոռանում տեղահանված արցախահայության ծանր վիճակի մասին: «Հայաստանում փախստականների հումանիտար իրավիճակը մնում է առաջնահերթություն: Մենք ավելի քան երեսուն միլիոն եվրո ենք տրամադրել նրանց աջակցելու համար եւ պատրաստ ենք ավելին անել»,- նշեց նախագահ Ֆոն դեր Լայենը՝ իր ուրախությունը հայտնելով, որ կարող են հույս դնել Միացյալ Նահանգների վրա՝ որպես հավատարիմ եւ համախոհ գործընկեր այս ջանքերում:

«Մենք շարունակելու ենք բոլորս միասին աշխատել՝ հանուն Հայաստանի ապագայի կայուն ու բարգավաճ հարավկովկասյան տարածաշրջանում»,- եզրափակեց Եվրոպական հանձնաժողովի նախագահը:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆԵԼ ՄԻՋԱԴԵՊԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Երուսաղեմում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոսությունը մտահոգություն է հայտնել քաղաքի հայկական թաղամասում տեղի ունեցած միջադեպերով:

Այս մասին ասվում է Երուսաղեմում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոսության X-ի միկրոբլոգում տարածված գրառման մեջ:

«Մենք կոչ ենք անում Իսրայելի իշխանություններին զերծ մնալ ցանկացած միակողմանի գործողություններից, որոնք կասկածի տակ են դնում Երուսաղեմի ստատուս քվոն»,- նշված է գրառման մեջ:

Իսրայելի ոստիկանությունը ապրիլի 3-ի մոտ ժամը 11:00-ին ապօրինի տեղահանում էր սկսել Երուսաղեմի Հայոց պատրիարքության «Կովերի պարտեզ» կալվածքից՝ ոչնչացնելով Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գույքը եւ հարձակվելով հոգեւորականների ու տեղացի հայերի վրա: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում տեղեկացրել էր Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանապետ Աղան Գոգչյանը:

Երուսաղեմի հին քաղաքի հայկական թաղամասի մի հատված պատրիարքարանը 99 տարով վարձակալության էր հանձնել իսրայելական ընկերությանը: Գործարքի հետեւանքով Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում ստեղծվել էր մտահոգիչ իրավիճակ, ինչի կապակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հեռախոսազրույց էր ունեցել Երուսաղեմի Հայոց պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի հետ: Քննարկման ընթացքում Պատրիարք Սրբազանը Վեհափառ Հայրապետին տեղեկացրել էր, որ քայլեր են ձեռնարկվում Պատրիարքարանի իրավունքների պաշտպանության եւ խնդրի բարվոք հանգուցալուծման համար:

ՉԳԻՏԵՆՔ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

Ռուսաստանը կկարողանա գնահատել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Եվրահանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լայենի եւ Ամերիկայի միացյալ նահանգների պետքարտուղար Անտոնի Բլինկենի բանակցությունների արդյունքները միայն այն բանից հետո, երբ Երեւանից պաշտոնական հայտարարություններ հայտնվեն այս հարցի վերաբերյալ. այս մասին ճեպազրույցում հայտարարել է Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը. փոխանցում է РИА Новости-ն:

«Մենք դեռ չգիտենք այս հանդիպման ամբողջական օրակարգը, թեեւ կան որոշակի հաղորդագրություններ»,- ասել է Կրեմլի խոսնակը:

Նա կոչ է արել սպասել «հայկական կողմից որոշ հայտարարությունների մասին, որ նրանք նկատի ունեն քննարկել տրանսատլանտյան ինտեգրման թեման»:

ՍՊԱՍԱՐԿՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ

Բրյուսելում Փաշինյան-Բլինքեն-Լայեն հանդիպումը եւ դրանից ակնկալիքները պետք է լինեն համաչափ. այն ի սկզբանե նախատեսված է եղել տնտեսական համագործակցության խորացման եւ ՀՀ տնտեսության զարգացման այլ հեռանկարներ սպասարկելու օրակարգով, հետեւաբար ակնկալիքներն էլ պետք է ձեւավորվեն՝ ըստ դրա: Այս մասին ապրիլի 5-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Ծովինար Վարդանյանը:

Անդրադառնալով Մոսկվայից, Բաքվից եւ Անկարայից հնչող մեղադրանքներին, որ այս հանդիպումը կարող է սրել իրավիճակը, եւ որ այն, իբր, ուղղված է Ռուսաստանի կամ Ադրբեջանի դեմ, ՔՊ-ական պատգամավորն ասաց. «Հայաստանը երբեք որեւէ երկրի դեմ որեւէ օրակարգ չի սպասարկում, Հայաստանը սպասարկում է իր սեփական շահերը:

Թե ինչու են մտահոգվել կոնկրետ Թուրքիան կամ Ադրբեջանը, ամենայն հավանականությամբ, ճիշտ կլինի իրենց հարցնել: Այո, նաեւ ԱՄՆ-ից է եղել հայտարարություն, որ դա տնտեսական դիվերսիֆիկացիային եւ տնտեսականհամագործակցությանն ուղղված հանդիպում է, եւ կարծում եմ, որ բոլոր կողմերը պետք է կարողանան ճիշտ գնահատել այդ հանդիպումը, դրա հնարավորություններն ու արդյունքները»:

Նրա խոսքով՝ տնտեսական դիվերսիֆիկացիան ենթադրում է նաեւ նոր շուկաներ մուտք գործելու հնարավորություն. «Հայաստանը քայլ առ քայլ եՀ իր ապրանքների որակի, եՀ ստանդարտների վրա պետք է աշխատանքներ տանի, որը մեզ թույլ կտա մուտք գործել ոչ միայն եվրոպական, նաեւ այլ շուկաներ»:

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՆԻՍՏ

Երեկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը նախաձեռնող նիստ էր արել:

Նիստին ներկա էին նաեւ փոխքաղաքապետեր Սուրեն Գրիգորյանը եւ Լեւոն Հովհաննիսյանը, ինչպես նաեւ ավագանու ՔՊ խմբակցության անդամները:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՔՊ-ականների եւ փոխքաղաքապետերի քննարկման հիմնական թեման Երեւանի փողոցների փոսալցման հարցն է եղել, որն արդեն տեւական ժամանակ է՝ վարորդներին ամենաանհանգստացնող խնդիրն է եւ խաթարում է նաեւ երթեւեկությունը:

ՔՊ-ականները փոխքաղաքապետերից հետարքրքվել են՝ երբ կլուծվի այդ խնդիրը, փոխքաղաքապետերն էլ ասել են, որ խնդրի կարգավորմանը խոչընդոտում են օրենսդրական կարգավորումները, մասնավորապես՝ տենդերի հայտարարման հետ կապված, թե որ կազմակերպությունը պետք է փոսալցման աշխատանքներն անի:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԴՈՒԹՅՈՒՆ

ՉԲԱՎԱՐԱՐՎԵԼՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑՈՎ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բրյուսելում ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենի հետ եռակողմ հանդիպմանն ընդառաջ մամուլի ասուլիսի ժամանակ իր ելույթը սկսեց գործընկերներին շնորհակալական խոսքով՝ ինքնիշխան, դիմակայուն եւ բարգավաճ Հայաստանի համար հավաքական հանձնառության համար:

Վարչապետը կարեւորել է եռակողմ այս հանդիպումը՝ այն անվանելով Միացյալ Նահանգների եւ ԵՄ-ի հետ ընդլայնվող գործընկերություն: «Չբավարարվելով ձեռք բերված առաջընթացով՝ մենք կքննարկենք Հայաստանի ջանքերը՝ ուղղված ժողովրդավարական ինստիտուտների դիմակայունության ամրապնդմանը: Մենք համոզված ենք, որ մեր համագործակցության հիմքում ընկած է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը: Հայաստանի Հանրապետությունը վերահաստատում է արդարադատության եւ հանրային հատվածի բարեփոխումներն առաջ մղելու իր հանձնառությունն՝ ավելի ուժեղ, ավելի ապահով եւ առաջադեմ երկիր կառուցելու համար», - ընդգծեց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետն իր ելույթում նշեց՝ հիմնվելով արդյունավետ քաղաքական համագործակցության վրա՝ ճիշտ ժամանակն է առաջ մղել տնտեսական համագործակցությունը, խթանել առեւտուրը եւ ընդլայնել գործընկերությունը շարժունակության ոլորտում: «Մենք վճռական ենք բարձրացնելու Հայաստանի մասնավոր հատվածի մրցունակությունը նոր շուկաներ մուտք գործելու նպատակով: Ավելին՝ մենք պատրաստ ենք բարելավել մեր ներդրումային միջավայրը եւ այն ավելի գրավիչ դարձնել եվրոպական եւ ամերիկյան ընկերությունների համար: Մենք ակնկալում ենք, որ մեր գործընկերները մեզ կաջակցեն արդիականացնել Հայաստանի որակի ենթակառուցվածքը, կառուցել բիզնես ցանցեր եւ ուսումնասիրել առեւտրի դյուրացման հնարավոր սխեմաները»,-ասաց վարչապետ Փաշինյանը:

Անդրադառնալով ԼՂ-ից բռնի տեղահանված ավելի քան 100 հազար հայերի կարիքներին՝ վարչապետը կարեւորեց նրանց արժանապատիվ կյանքը վերականգնելը բնակարանային եւ տնտեսական ակտիվացման քաղաքականությունների միջոցով:

Խոսելով Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորումից՝ Նիկոլ Փաշինյանը եւս մեկ անգամ վերահաստատեց Հայաստանի հավատարմությունը գործընթացին՝ հիմնված միմյանց ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման վրա՝ համաձայն 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի: Նա հավելեց, որ Հայաստանը նաեւ լիովին հավատարիմ է Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա սահմանների սահմանազատմանը եւ տարածաշրջանային բոլոր հաղորդակցությունների ապաշրջափակմանը, որը հիմնված է երկրների ինքնիշխանության եւ իրավազորության, հավասարության եւ փոխադարձության սկզբունքների լիարժեք հարգման վրա»:

Իր ելույթի վերջում վարչապետ Փաշինյանը նշեց, որ այդ ամենին հասնելու համար կառավարությունը ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը, եւ հույս հայտնեց, որ գործընկերները կաջակցեն, որպեսզի նախաձեռնությունն ինտեգրվի ԵՄ Գլոբալ դարպասների ռազմավարության հետ:

«Ես հավատում եմ, որ ժողովրդավարական, խաղաղ եւ բարգավաճ ապագայի մեր ընդհանուր տեսլականը կշարունակի ծառայել որպես մեր փոխվստահելի հարաբերությունների հիմնասյունը ու առաջնորդող փարոս», - եզրափակեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՈՂՋՈՒՆԵԼԻ Է ՀԱՄԱԲՈՒՄ

Եվրոպական խորհրդարանի իտալացի պատգամավոր Մասիմիլիանո Սալինին ողջունելի է համարում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության բանակցությունները եւ հանդիպումները, սակայն կարծում է, որ չպետք է մոռանալ հայերի բռնի տեղահանումը Լեռնային Ղարաբաղից:

«Ողջունելի են բանակցությունները, խաղաղության համար հանդիպումները, երկխոսությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, ինչը վկայակոչում են միջազգային հանրությունը եւ Հռոմի Պապ Ֆրանցիսկոսը Սուրբ Ջատկի իր ուղերձում: Բայց մենք չենք կարող եւ չպետք է մոռանանք կամ ձեւացնենք, թե չենք հիշում քրիստոնյա ժողովրդի ողբերգական ջնջումը Լեռնային Ղարաբաղից, որն արմատախիլ է արվել մի հողից, որտեղ ապրում է չորս հազար տարի: Այժմ, երբ ուշադրությունը պատերազմի այս օջախի վրա է նորից, հայ ժողովրդի դեմ ագրեսիան չի կարելի եւ չպետք է թերագնահատել կամ օրակարգից հանել»,- «Ինստագրամ»-ի իր էջում գրել է ԵԽ պատգամավոր, Եվրոպական ժողովրդական կուսակցության խմբի անդամ (քրիստոնյա դեմոկրատներ) Մասիմիլիանո Սալինին:

ՎԱՐԿ Է ՎԵՐՑՆԵԼՈՒ

Հայաստանը պատրաստվում է 25,1 մլն եվրոյի վարկ վերցնել՝ Երեւանի շենքերի էներգաարդյունավետությունը բարելավելու համար: Այս մասին ապրիլի 5-ին Ազգային ժողովում հայտարարեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Վաչե Տերտերյանը՝ ֆինանսական, վարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում՝ «Երեւանի էներգաարդյունավետության երկրորդ փուլը» ֆինանսական համաձայնագրի վավերացման հարցի քննարկման ժամանակ, որը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ:

Վարկը, նրա խոսքով, ուղղված է լինելու շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանը: Խոսքն էլեկտրաէներգիայի սպառումը նվազեցնելու եւ էներգիայի այլընտրանքային աղբյուրներով փոխարինելու միջոցառումների մասին է: Ծրագիրը կընդգրկի 32 մանկապարտեզ եւ 6 կլինիկա:

Ծրագրի ընդհանուր չափը գնահատվում է 37,1 մլն եվրո: Մայրաքաղաքի քաղաքապետարանի համաֆինանսավորումը կկազմի 2 մլն եվրո: Բանկի կողմից տրամադրվող վարկի չափը կկազմի 25 մլն եվրո: Եվս 10,1 մլն եվրո կստացվի դրամաշնորհի տեսքով:

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ

ԲՐԳԱՁԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՄՈԴԵԼ

«Հետք»-ը հրապարակել էր, որ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սարգիս Հովհաննիսյանը հայցադիմում է ներկայացրել վարչական դատարան՝ դիմանջելով անվավեր ճանաչել Առաջին ատյանի, Վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարանների դատավորների ներքին աշխատանքային կարգապահության կանոնները սահմանելու մասին Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) 2023թ. դրոշման դրոյթներ:

2023թ. դեկտեմբերի 4-ին ԲԴԽ-ն դատավորների աշխատանքային կարգապահության կանոնները սահմանող որոշում է ընդունել: Դրանք վերաբերում են դատավորների իրավունքներին ու պարտականություններին, աշխատանքի եւ հանգստի ժամանակին, աշխատանքային պայմանների առանձնահատկություններին, դատավորների միջեւ ծառայողական փոխհարաբերություններին եւ այլն: Դատավոր Սարգիս Հովհաննիսյանը Վարչական դատարանում վիճարկում է այդ որոշման 12 կետ: Առաջին հերթին պահանջում է անվավեր ճանաչել այն դրույթը, որով սահմանվում է, որ որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Դատավորը խնդրահարույց է համարում նաեւ այն դրույթը, որ Վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարանների առանձնահատկություններով, այդ թվում՝ մասնագիտացումներով պայմանավորված, դատարանի նախագահը դատավորի հետ փոխադարձ համաձայնությամբ որոշ կանոններ կարող է փոփոխել: Փոփոխվող կանոններից մեկն էլ այն է, որ դատարանում սահմանվում է 5-օրյա աշխատանքային շաբաթ՝ հանգստյան օրերը շաբաթն ու կիրակին են, ինչպես նաեւ տոն կամ հիշատակի օր համարվող ոչ աշխատանքային օրերը, իսկ աշխատանքը սկսվում է ժամը 09:00-ին եւ ավարտվում 18:00-ին, ընդմիջումը՝ ժամը 13-14-ը: Վիճարկվող մյուս նորմը աշխատանքային ժամերի մասին է. դատարանի նախագահը փոխադարձ համաձայնությամբ կարող է հետաձգել առանձին դատավորների աշխատանքային օրվա սկիզբը, ավարտը եւ ընդմիջման ժամը: ԲԴԽ-ի որոշմամբ սահմանվում է նաեւ, որ ընդմիջման ժամը չի ներառվում աշխատաժամանակի մեջ, իսկ դատավորն ընդմիջման ժամն օգտագործում է իր հայեցողությամբ: Սա եւս Ս. Հովհաննիսյանի համար վիճելի դրույթ է: Սա էլ դեռ քիչ չէր, Բարձրագույն դատական խորհուրդը դատարանների նախագահներին մի նոր փաստի առաջ է կանգնեցրել: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի էր դարձել, որ որոշել է՝ այսուհետ դատավորները պետք է իրենց գործերի ժամկետների մասին տեղյակ պահեն դատարանի նախագահին, եթե ժամանակին չեն ավարտել գործը, ներկայացնեն պարզաբանում, թե ինչու չի հաջողվել: Ամենաուշագրավը ԲԴԽ որոշման մեջ այն է, որ եթե դատարանի նախագահն էլ չպահպանի դատարանի դատավորների կողմից գործերի ժամկետների հսկողության մասով հետեւողական մոտեցում ու ժամանակին դեպարտամենտին տեղյակ չպահի, ապա ողջ պատասխանատվությունը ընկնում է իր վրա: Ասել է թե՝ դատարանների նախագահները պետք է սկսեն դատավորների վարույթներում քննվող գործերի ընթացքի մասին մանրամասներին տիրապետել եւ ապա զեկուցել ԲԴԽ-ին: Բացի այդ, սահմանել են, որ դատավորները, որոնք իրենց խնամակալության տակ ունեն մանկահասակ երեխա (ներ) եւ (կամ) առողջական խնդիրներ ունեցող անձ(ինք) եւ այլն, դատարանի նախագահին նախապես ու ամսվա վերջում գրավոր հաշվետվություններ պետք է տան (ինչը նույնիսկ ոստիկանությունում ու քննչական մարմիններում չկա): Դատավորները կարող են բացակայել աշխատանքի վայրից օրվա ընթացքում առավելագույնը մեկ ժամ: Ընտանեկան դրության մանրամասները դատարանների նախագահներին զեկուցելուց բացի, պետք է իրենց վարույթի գործերի մանրամասները ներկայացնեն, որ նրանք վերհսկեն ընթացքը: Այսկերպ «անկախ դատական համակարգի» բրգաձեւ ղեկավարման նոր մոդել է ներդրվում սիրուն փաթեթավորմամբ՝ վարքագծի նկատմամբ հսկողությունից անցնելով ընթացիկ գործերի մոնիթորինգին: Այս քայլով ԲԴԽ-ն, որ սահմանադրական անկախ մարմին է՝ ապահովելու դատական անկախ համակարգի գործունեությունը, իրականացնելու է տոտալ հսկողություն՝ համակարգը արդեն դե յուրե դարձնելով միասնական կառավարման ենթակա կառույց, շեֆ-ենթակա հարաբերություն կառուցելով»: ՀՀ վերաքննիչ դատարանի նախագահ Մխիթար Պապոյանը վերանշյալ նախագծի մասով նույնպես մտահոգություններ էր հայտնել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ՞ ՎՃԻՌ

ՈՐՈՇՈՒՄ ԵՆ ՕՐՆ ՈՒ ԺԱՄԸ

Քիչ առաջ «Դատական իշխանություն» պաշտոնական կայքում եւ ֆեյսբուքյան էջում հրապարակվել է տեղեկություն, որի համաձայն՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Կարապետ Բաղալյանի կողմից երեկ կայացրած վճռի հիման վրա գործարար Սամվել Մայրապետյանից եւ «Գլոբուս» ՍՊԸ ընկերության տնօրեն Գ. Հակոբջանյանից հօգուտ Հայաստանի կբռնագանձվի ավելի քան 4 մլրդ դրամ:

Սամվել Մայրապետյանը ArmLur.az-ին այս առնչությամբ հայտնեց. «Ես միշտ գիտակցել եմ, որ Հայաստանի ներկայիս իշխանությունները ինձ չեն ներում այն բանի համար, որ ինձնից չստացան իրենց կողմից ակնկալվող սուտ ցուցմունքները, եւ որ ես ու ընտանիքիս անդամները ենթարկվելու ենք բոլոր տեսակի հնարավոր ճնշումներին: Գալով այսօրվա՝ իրավագիտության հետ աղերս չունեցող վճռին՝ կարող եմ միայն ասել, որ պատահականություն չէ, որ վճիռը տարածվեց հենց այսօր առավոտյան, չնայած որ մինչեւ այս պահը այն հրապարակված չէ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում: Բանը նրանում է, որ վճիռը պետք է հրապարակվեր դեռեւս 2024 թվականի մարտի 20-ին, սակայն, Դատարանի որոշմամբ, դատաքննությունը նորից վերսկսվեց իբրեւ թե գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու նպատակով: 2024 թվականի ապրիլի 1-ին նշանակված դատական նիստի օրը, սակայն, այդպես էլ դատարանի համար չպարզաբանվեցին իրենց համար անհրաժեշտ հարցերը, եւ անհասկանալիորեն վճռի հրապարակման օր նշանակվեց ապրիլի 5-ը. կարելի է ենթադրել Փաշինյանի բրյուսելյան այցի օրը՝ PR արդյունք ցուցադրելու համար: Ստացվում է, որ իշխանությունները վերահսկում են ոչ միայն վճռի բովանդակությունը, այլ նաեւ որոշում են հրապարակման օրն ու ժամը:

Այս ոչ իրավաչափ վճռով ոչ մի գումար էլ չի կարող փոխհատուցվել պետական բյուջե, քանի որ իրավաբանության հետ կապ չունեցող այս գործընթացը սկզբից մինչեւ վերջ հակաիրավական է, հետեւաբար այն անպայմանորեն բողոքարկվելու է բոլոր հնարավոր՝ թե՛ ներպետական եւ թե՛ միջազգային ատյաններում:

Տեղի ունեցածին եւ մասնավորաբար դատարանի վճռին մանրամասն եւ փաստերով կանդրադառնա իմ փաստաբանական խումբը «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում վճռի պատշաճ հրապարակվելուց հետո, որտեղ, սովորաբար, ըստ օրենքի հրապարակվում են դատավճիռները»:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ Է

Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի որդու խափանման միջոցը փոխվել է, եւ նա տնային կալանքի տակ է: Ինչպես հայտնում են ՀՀ ՔԿ-ից, 2023 թ. հունիսի 19-ին՝ ժամը 21:40-ին, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից հաղորդում է ստացվել Գորիս քաղաքի բնակչի՝ աջ դաստակի շրջանի ափային մակերեսի վնասվածքով հիվանդանոց ընդունվելու մասին: Ստացված տեղեկությունը ստուգելու նպատակով իրականացվել են անհետաձգելի միջոցառումներ, որոնց արդյունքում պարզվել են դեպքի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ դեպքի վայրը, շարժառիթը, ինչպես նաեւ առերեւույթ հանցագործություն կատարած անձի ինքնությունը: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով, 297-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությամբ փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Տիգրան Խաչատրյանը ավտոմեքենայի համար անվադողեր գնելու հարցի շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերել անվադողերի վաճառքով զբաղվող, 46-ամյա համաքաղաքացու հետ: Վերջինիս եղբոր որդին դրանք տրամադրելու նպատակով զանգահարել է Տիգրան Խաչատրյանին, եւ, դիմելաձեւի հետ կապված, նրանց միջեւ առաջացել է լեզվակռիվ, որը մնացել է անավարտ: Նույն օրը՝ ժամը 20:30-ի սահմաններում, Տ. Խաչատրյանն իրեն պատկանող Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենայով երկու մտերիմների հետ գնացել է ավտոտեխսպասարկման կետ, որտեղ հիշյալ հարցի շուրջ պարզաբանումներ կատարելու ընթացքում, չնչին առիթն օգտագործելով, իր սեփական անձի առավելություններն ընդգծելու եւ այդ կերպ հանդուգն վարքագիծ դրսեւորելու մոլուցքից դրդված, խուլիգանական դրդումներով վիճաբանություն է հրահրել աշխատակիցների հետ, նրանց հասցեին հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ: Ապա, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, ավտոտեխսպասարկման կետի հարեւանությամբ գտնվող քաղաքացիների, թաղամասի բնակիչների, սպասարկման կետերի անդորրը խախտելով, իր մոտ ապօրինի կրած հրազենով կրակոց է արձակել 46-ամյա տղամարդու ուղղությամբ՝ վերջինիս պատճառելով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող վերոնշյալ մարմնական վնասվածքը, եւ հեռացել դեպքի վայրից: Այդ ընթացքում Տ. Խաչատրյանը, իր վարած Merčedes-Benz մակնիշի վնասված ավտոմեքենան թաքցնելով, ընկերներից մեկի հետ իրեն պատկանող մեկ այլ՝ «Toyota Land Cruiser 200» մակնիշի ավտոմեքենայով լքել են Գորիսի տարածքը: Միջնորդություն է ներկայացվել հսկողություն իրականացնող դատախազին՝ Տ. Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով, 171-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որը բավարարվել է:Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ Տիգրան Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, եւ նա կալանավորվել էր:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 111 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽՈՍՏԱՑԵԼ ԵՆ ՆՈՐՈԳԵԼ

Տավուշի մարզպետարանի տեղեկություններով՝ մարզի հանրակրթական 76 դպրոցների շենքերից 10 դպրոցների շենքեր ունեն հիմնանորոգման, 32-ը՝ վերանորոգման (դասասենյակներ, միջանցքներ, մարզադահլիճներ) կարիք: Չնայած նրան, որ պետական բյուջեից հսկայական գումարներ են տրամադրվում պետական պաշտոնյաներին պարգեւատրելու նպատակով, Տավուշի մարզի հանրակրթական շատ դպրոցների շենքեր, որոնք հիմնանորոգման հրատապ կարիք ունեն, տասնամյակներ շարունակ չեն նորոգվում: Այդպիսի դպրոցներից է Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բերդավանի դպրոցը: Կրթության, դաստիարակության գործում հաջողություններ ունեցող այդ դպրոցի շենքի նորոգման խնդիրը մասամբ լուծվում է ոչ թե պետական ֆինանսավորմամբ, այլ բերդավանցիների հանգանակած գումարներով: Բերդավանում, Հայաստանի, արտերկրի տարբեր բնակավայրերում ապրող բերդավանցիները գումարներ են հանգանակում, որպեսզի հայրենի, սահմանամերձ գյուղում տարբեր աշխատանքներ իրականացնեն, այդ թվում՝ Բերդավանի դպրոցում վերանորոգման աշխատանքներ անեն: 2023 թվականի սկզբին «Բերդավան» հիմնադրամի նախաձեռնությամբ ասֆալտապատվել է Բերդավանի դպրոցի մուտքից դեպի դպրոցի ֆուտբոլի խաղադաշտ տանող ճանապարհը: 2023 թվականի դպրոցական «Վերջին Զանգի» նախաշեմին «Բերդավան» հիմնադրամի նախաձեռնությամբ եւ աջակցությամբ ամբողջությամբ փոխվել է Նոյեմբերյան Բերդավանի դպրոցի մուտքի դարպասը, տեղադրվել է նոր, մեծ դարպաս: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե երբ է վերանորոգվելու Բերդավանի միջնակարգ դպրոցի շենքը: Մարզպետարանից պատասխանել են. «Բերդավանի դպրոցում կատարվել են բազմաթիվ էպիզոդիկ ծրագրեր, սակայն ամբողջական հիմնանորոգման աշխատանքներ դեռեւս չի իրականացվել, սակայն այն ընդգրկված է 300 դպրոց եւ 500 մանկապարտեզների ծրագրի մեջ, եւ այն կիրականացվի մինչեւ 2026 թվականը»:

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՏՈՒՄՆԵՐ

Ֆեյսբուքի «Դիլիջանցիք» խմբում, որի անդամները հիմնականում Դիլիջան համայնքի բնակիչներ են, Դիլիջան համայնքի բնակիչներից մեկը տեղադրել է հաստ, թաց վառելափայտով բեռնված բեռնատարի լուսանկար, իր անուն-ազգանունը, հեռախոսահամարը եւ վառելափայտի վաճառքի հայտարարություն: Տրամաբանական է, որ այդ փայտը հատվել է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, որտեղ հատումներն ընդհանրապես արգելված են: Դիլիջանի ազգային պարկում շարունակվող ապօրինի անտառհատումներին, ազգային պարկի հատաբուն վերջին ծառերը հատելու վերաբերյալ վերջերս հրապարակումներ է ունեցել «Բնապահպանի տուն» ՀԿ-ն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՈՉՈՎ ԵՆ ՀԱՆԴԵՍ ԵԿԵԼ

ԽԱԹԱՐԵԼ Է ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ԱՄՆ մի խումբ սենատորներ պետքարտուղար Էնթոնի Բլինքենին ուղղված նամակում նախագահ Ջո Բայդենի վարչակազմին կոչ են անում ապահովել Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների ազատ արձակումը եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության՝ իրենց հայրենիք վերադառնալու իրավունքը:



Այս մասին նշվում է Ամերիկայի հայ դատի հանձնախմբի (ANCA) տարածած հաղորդագրության մեջ՝մանրամասնելով, որ նման կոչով հանդես են եկել սենատորներ Էդ Մարկին (դեմոկրատ՝ Մասաչուսեթսից), Բիլ Քեսիդին (Հանրապետական՝ Լոս Անջելեսից), Թոմ Թիլիսը (Հանրապետական՝ Հյուսիսային Կարոլինայից) եւ Գարի Փիթերսը (դեմոկրատ՝Միչիգանից):

Սենատորներն ընդգծել են, որ Ադրբեջանն աննշան տույժեր է կրել միջազգային հանրությունից՝ կապված Լեռնային Ղարաբաղի նախկին ղեկավարների եւ այլ պաշտոնյաների շարունակական կալանքի տակ պահելու համար:

«Բայդեն-Հարիսի վարչակազմի անկարողությունը՝ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու Արցախում ցեղասպանության, Հայաստանի տարածքների օկուպացիայի եւ հայ բանտարկյալների ու քաղաքական առաջնորդների շարունակական կալանքի տակ պահելու համար, ոչ միայն խաթարել է կայուն եւ արդար խաղաղության ապահովմանն ուղղված ջանքերը, այլեւ քաջալերել է Ադրբեջանի կողմից ագրեսիայի վերսկսման աճող սպառնալիքները», - հայտարարել է Ամերիկայի հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը՝ շնորհակալություն հայտնելով նամակի հեղինակ սենատորներին վարչակազմի վրա ճնշում գործադրելու եւ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու կոչի համար:

Նրա պնդմամբ՝ բանակցությունների միջոցով ցանկացած կարգավորում պետք է համապատասխանի արցախահայության՝ իրենց հայրենի հայրենիքում խաղաղ եւ անվտանգ ապրելու հիմնարար իրավունքներին:

Նամակում, որտեղ կոչ է արվում Պետքարտուղարությանը Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը որակել որպես էթնիկ զտում, ընդգծվում է անհրաժեշտությունը, որ Բայդենի վարչակազմը վճռականորեն պաշտպանի եւ ապահովի հայերի՝ միջազգային երաշխիքներով իրենց տները վերադառնալու իրավունքը:

Թեեւ Բայդենի վարչակազմը մի քանի հրապարակային հայտարարություններով պաշտոնապես հաստատել է Լեռնային Ղարաբաղի բնակչության վերադարձի իրավունքը, այդուհանդերձ որեւէ շոշափելի գործողություն չի ձեռնարկել՝ ապահովելու համար այն անվտանգ պայմանները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ապահովվի նաեւ հայերի՝հետապնդումներից զերծ լինելն այն դեպքում, եթե նրանց թույլատրվի վերադառնալ իրենց տները:

Մեկնաբանելով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության բանակցությունների ընթացքը՝ սենատորները նշել են, որ Լեռնային Ղարաբաղի քաղաքական ղեկավարությանը գլխատելու Ադրբեջանի փորձերը «էթնիկ զտումներ իրականացնողների հայտնի մարտավարությունն են»:

Նամակում, մասնավորապես, ընդգծվում է Լեռնային Ղարաբաղի ներկա եւ նախկին առաջնորդների, այդ թվում՝ նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանի, Բակո Սահակյանի եւ Արայիկ Հարությունյանի, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի, արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանի, Ազգային ժողովի նախկին խոսնակ Դավիթ Իշխանյանի եւ այլոց՝ շարունակական ապօրինի կալանքի տակ պահելը:

ԱՆՆԱ ՍՐԿՊԻՈՆՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի հանրակրթության ոլորտում արդեն հայտնի են «Լավագույն տնօրեն», «Լավագույն տեղակալ», «Հասարակություն, հասարակական գիտություններ» եւ «ԲՏՃՄ բնագավառի լավագույն ուսուցիչ» անվանակարգերի հաղթողները:

Ինչպես տեղեկացանք Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, 2024 թվականից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից մշակվել է հանրակրթության պետական չափորոշչի ներդրման լավագույն փորձառության խրախուսմանն ուղղված նոր նախաձեռնություն, համաձայն որի՝նախատեսվում է կրթության գործընթացի վերանայում մի շարք ուղղություններում՝ սկսած ուսումնական պլանի կազմումից մինչեւ նախագծային աշխատանքների իրականացումը եւ պարտադիր խմբակների գործարկումը:

Այն ենթադրում է նաեւ դասավանդման մեթոդաբանության վերանայում, միջառարկայական կապի ապահովում, ինքնուրույն հետազոտական եւ ստեղծագործական գործունեության խթանում:

Հաշվի առնելով չափորոշչի ներդրմամբ պայմանավորված աշխատանքների հիմնական ուղղությունները՝ սահմանվել է լավագույն փորձի խրախուսման 10 անվանակարգ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, ամփոփելով 2024 թվականի առաջին եռամսյակում Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից մասնակցություն ցուցաբերած մանկավարժների կողմից ներկայացված լավագույն փորձառությունը եւ գնահատելով նրանց կարողությունները, «Լավագույն տնօրեն» անվանակարգում լավագույն է ճանաչել Զոլաքարի Ալվարդ Վարդանյանի անվան N2 միջնակարգ դպրոցի տնօրեն Կարեն Մելիքյանին, «Տնօրենի տեղակալի պաշտոն զբաղեցնող լավագույն տեղակալ» անվանակարգում՝ Գավառի Սուրեն Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոցի տնօրենի տեղակալ Գոհար Շահինյանին, «Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա» անվանակարգում՝ Զոլաքարի Ալվարդ Վարդանյանի անվան N2 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նուսե Օսեյանին եւ նույն դպրոցի շախմատ առարկայի ուսուցչուհի Զարուհի Նալբանդյանին, «Հասարակություն, հասարակական գիտություններ» անվանակարգում՝ Լիճքի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի «Պատմություն» առարկայի ուսուցչուհի Անահիտ Ավագյանին:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշմամբ՝ մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից կշարունակվեն յուրաքանչյուր ամիս ընտրվել լավագույն աշխատողներ, որոնց անվանացանկը կներկայացվի մարզպետի աշխատակազմ եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 8 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԴՐԱՄԱՏԻԿ ՎՏԱՐՈՒՄ

ՉԻ ԿԱՐԵԼԻ ԹԵՐԱԳՆԱՀԱՏԵԼ

«Չի կարելի մոռանալ քրիստոնյա ժողովրդի դրամատիկ վտարումը Լեռնային Ղարաբաղից»,- Facebook-ի իր էջում գրել է Իտալիայից Եվրախորհրդարանի պատգամավոր Մասիմո Սալինին:

«Մենք չենք կարող եւ չպետք է մոռանանք կամ ձեւացնենք, թե չենք հիշում քրիստոնյա ժողովրդի դրամատիկ վտարումը Լեռնային Ղարաբաղից՝ վտարված այն հողից, որտեղ նրանք ապրել են չորս հազար տարի: Այժմ, երբ ուշադրությունը դարձյալ շրջվել է պատերազմի այս օջախի վրա, հայ ժողովրդի դեմ ագրեսիան չի կարելի թերագնահատել»,- ասել է Սալինին:

Նրա խոսքով՝ եվրոպական կառույցներն այսօր նոր հնարավորություն ունեն հաղթահարել անգործությունը եւ բարձրացնել իրենց ձայնը:

«Գործելու հնարավորություն, այլ ոչ թե պարզապես դիտելու: Պահանջվում է խիզախություն, ինչի համար ես կոչ եմ արել վերջին ամիսներին Եվրոպական ժողովրդական կուսակցության աջակցությամբ՝ ընդհուպ մինչեւ Ադրբեջանի դեմ պատժամիջոցների վարկածը: Եվրոպան վստահելի չէ, եթե այն շարունակում է քարոզել ընդլայնման ձեւեր, իսկ հետո չի կարողանում պաշտպանել մի ժողովրդի պատմությունն ու ապագան, որն այսօր ներկայացնում է նաեւ եվրոպական մշակույթը»,- ասել է Սալինին:

Եվրախորհրդարանի պատգամավորը հայտարարեց, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ բանակցություններն ու երկխոսությունը ողջունելի են, ինչի կոչ են անում միջազգային հանրությունը եւ Հռոմի Պապ Ֆրանցիսկոսը Զատկի ուղերձում:

«Ուրիշ ի՞նչ կարող է լինել Լեռնային Ղարաբաղից հետո՝ մեր եվրոպական սահմաններից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Բանակցությունները, ցանկացած բանակցությունները պետք է հիմք դնեն տուժող կողմի իրավունքների եւ իրավասությունների հարգման համար, այլ ոչ թե փոխզիջումների: Հռոմի Ֆրանցիսկոս պապը կոչ է արել բանակցություններ վարել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, որպեսզի նրանք կարողանան «շարունակել երկխոսությունը, օգնել տեղահանվածներին, հարգել տարբեր կրոնների պաշտամունքի վայրերը»», - ասել է Սալինին:

Նա նաեւ հայտարարել է, որ երբ բախվելով Լեռնային Ղարաբաղի դրամային, որտեղ տեսանելի են մարդկանց պատկերները, եկեղեցիները եւ քրիստոնեական խորհրդանիշները, որոնք հարձակման են ենթարկվել կործանարար նպատակներով, անմարդկային դաժանությամբ գործողություններ են իրականացվել նրանց կողմից, ովքեր ցանկանում են ոչնչացնել ողջ բնակչությանը, տեղ չկա դիվանագիտության համար, որը ձեւացնում է, թե ոչինչ չգիտի, կամ երկչոտ է գործում՝ ավելացնելով, որ Եվրոպան կարող է եւ պետք է հարվածի:

ՅՈՒՆԵՍԿՕ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ Է ՈՒՆԵՑԵԼ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում Սերգեյ Փարաջանովի հոբելյանական միջոցառումներին մասնակցելու այցի շրջանակում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպումներ է ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակույթի, կրթության, հասարակական եւ հումանիտար գիտությունների հարցերով տեղակալներ Էռնեստո Օստոնեի, Ստեփանիա Ջանինիի եւ Գաբրիելա Ռամոսի հետ:

Հանդիպումներին ներկա էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարիտիրոսյանը եւ Ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանը:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակութային հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում՝ պատմամշակութային ժառանգության, ոչ նյութական ժառանգության պահպանության, մշակութային բազմազանության խրախուսման վերաբերյալ:

Այս համատեքստում խոսվել է Լեռնային Ղարաբաղում հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացման եւ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին՝ կարեւորելով Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցների հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ մշակութային իրավունքի իրացման հարցերը:

Ժաննա Անդրեասյանն առաջարկել է ԼՂ պատմամշակութային ժառանգության պաշտպանության հարցն ընդգրկել մայիսի 13-15-ը Հաագայում կայանալիք «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիայի ընդունման 70-ամյակին նվիրված միջազգային համաժողովի օրակարգում՝ ընդգծելով, որ խոսքը 5000 անշարժ հուշարձանի եւ թանգարանային ցուցանմուշների մասին է:

Էռնեստո Օտտոնեն շնորհակալություն է հայտնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատանքներին Հայաստանի ակտիվ մասնակցության եւ աջակցության համար՝ նշելով, որ Հայաստանը տարածաշրջանում առաջատարն է հակամարտությունների արդյունքում մշակութային ժառանգության ուսումնասիրության, տեխնիկական առաքելություններին եւ վերականգնմանը մասնակցելու առումով:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ՅՈՒՆԵՍԿՕ-ին «Տաթեւի եւ Տաթեւի Անապատ վանական համալիրներ եւ Որոտանի հովտի հարակից տարածքներ» հուշարձանին ուժեղացված պաշտպանության կարգավիճակ շնորհելու համար: Նախարարը միաժամանակ տեղեկացրել է, որ «Վերականգնելով Մոսուլի ոգին» ծրագրի շրջանակում մարտ ամսին ավարտվել է Մատենադարանի մասնագետների այցը Էրբիլի Արեւելյան ձեռագրերի թվայնացման կենտրոն՝ նշելով, որ հայկական կողմը կարեւորում եւ խրախուսում է Մատենադարանի ներգրավումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ծրագրերում:

Նախարարը նաեւ կարեւորել է «Մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության խրախուսման եւ պաշտպանության մասին» կոնվենցիայի շրջանակում համագործակցության հետագա զարգացումը: Այդ համատեքստում նախարարը հաստատել է, որ 2025 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կկազմակերպվի համերգ՝ նվիրված ֆրանսահայ շանսոնյե, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Շառլ Ազնավուրին, իսկ սեպտեմբերին Հայաստանում կանցկացվի միջազգային համաժողով՝ նվիրված նշյալ կոնվենցիայի կիրարկմանը:

Հանդիպման վերջում ԿԳՄՍ նախարարը շնորհակալություն է հայտնել Էռնեստո Օտտոնեին՝ Փարաջանովին նվիրված հոբելյանական միջոցառումները ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում հյուրընկալելու եւ միջոցառումներին մասնակցելու համար:

Նույն օրը կայացել է ԿԳՄՍ նախարարի հանդիպումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Ստեֆանիա Ջանինիի հետ: Քննարկումները ծավալվել են Հայաստանում գործող ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնների, մշակույթի եւ արվեստի կրթության նոր ձեւաչափի, Աբու-Դաբիի որոշումների, ինչպես նաեւ «Դպրոցական սնունդ» ծրագրի շուրջ:

Շնորհակալություն հայտնելով հանդիպման համար՝ Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է 2023 թվականի հոկտեմբերին Հայաստան փաստահավաք առաքելություն այցի արդյունքների մասին, որոնցից մեկը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կրթության ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի կազմակերպումն էր: Նախարարն առանձնահատուկ կարեւորել է «Դպրոցական սնունդ» ծրագիրը, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել միջազգային գործընկերների շրջանում:

Ստեֆանիա Ջանինին ընդգծել է, որ «Դպրոցական սնունդ» ծրագիրն անչափ կարեւոր է, քանզի հատկապես փախստական եւ բռնի տեղահանված երեխաները հատուկ աջակցության եւ ուշադրության կարիք ունեն: Քննարկման ընթացքում նաեւ շեշտել է մշակութային կրթության վեկտորի զարգացման Հայաստանի հանձնառությունը:

Անդրադառնալով կրթության ոլորտին՝ ԿԳՄՍ նախարարը նշել է, որ Հայաստանը բազմաթիվ կրթական, այդ թվում՝ նեռառական կրթության հաջողված ծրագրեր եւ նախաձեռնություններ ունի՝ առաջարկելով իրականացնել փորձի փոխանակում:

Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ «խաղաղ կրթության» ապահովումը տարածաշրջանում, որն առանձնակի նշանակություն ունի ՀՀ-ի համար՝ նշելով, որ այս հարցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությունը կարեւոր է:

Նախարարը հաջորդաբար հանդիպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի հասարակական եւ հումանիտար գիտությունների հարցերով տեղակալ Գաբրիելա Ռամոսի հետ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄՐՑԱՇԱՐ

«ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ»

2024 թվականի ապրիլի 3-ից Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի եւ Սեւան համայնքներում մեկնարկել են «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի համայնքային փուլի մրցումները:

Ինչպես տեղեկացանք Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, այդ օրը պայքարի մեջ են մտել 1-ին տարիքային խմբի՝ 5-9-րդ դասարանների աշակերտներից կազմված դպրոցական հավաքական թիմերը: Յուրաքանչյուր թիմի կազմում ընդգրկված է 2 տղա եւ 2 աղջիկ:

Գավառ, Մարտունի, Սեւան համայնքներում 2-րդ տարիքային խմբի՝ 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված դպրոցական հավաքական թիմերի մրցումներն անցկացվում են ապրիլի 4-ին:

Ճամբարակ համայնքում մրցումները կանցկացվեն ապրիլի 6-ին եւ 7-ին, իսկ Վարդենիս համայնքում՝ ապրիլի 9-ին եւ 10-ին:

Խեւանի համայնքապետարանից ստացված տեղեկատվության համաձայն՝ 5-9-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերից մասնակցելու համար հայտ էր ներկայացրել 14 դպրոց՝ 56 աշակերտով:

1-ին մրցանակային տեղը գրավել է Սեւանի թիվ 4 հիմնական դպրոցի թիմը, 2-րդ պատվավոր հորիզոնականը զբաղեցրել է Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի թիմը, 3-րդ մրցանակակիր է դարձել Դդմաշենի միջնակարգ դպրոցի թիմը:

Համայնքային փուլին 2-րդ տարիքային խումբը ներառում է 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերը, որին մասնակցելու համար հայտ է ներկայացրել 11 դպրոց:

2 տարիքային խմբերում լավագույնը ճանաչված թիմերը մասնակցելու են 2-րդ՝ մարզային փուլին, որն անցկացվելու է ապրիլի 15-ից 23-ը ՀՀ մարզերում եւ Երեւան քաղաքում:

3-րդ՝ եզրափակիչ փուլը տեղի կունենա ապրիլի 27-28-ը Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում:

Մրցաշարի 1-ին փուլում 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը պարգեւատրվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ»

ՓԱՌԱՏՈՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՒ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

«Խաչմերուկներ. ժամանակակից երաժշտության օրեր Հայաստանում» միջազգային փառատոնը կանցկացվի ապրիլի 29-ից մայիսի 16-ը Երեւանում եւ Դիլիջանում:

7-րդ անգամ կազմակերպվող փառատոնը կրում է «Հայկական խճանկար» խորագիրը: Այս տարվա արտիստներից են Անդրիուս Հարությունյանը, Գաշիա Ուզունյանը, Հայկ Մելիքյանը, Ասոնանս անսամբլը, Երեւանի պետական կոնսերվատորիայի «Բումերանգ» անսամբլը եւ Երեւան լարային քառյակը:

«Խաչմերուկներ» ժամանակակից երաժշտության միջազգային փառատոնը միակն է Հայաստանում, որը ներառում է համաշխարհային ժամանակակից ակադեմիական երաժշտության մեծաքանակ նոր եւ նշանակալից գործեր: Դրանց զգալի մասն առաջին անգամ է հնչում, այսինքն՝ փառատոնը բեմ է հանդիսանում դրանց հայաստանյան եւ համաշխարհային պրեմիերաների համար:

Փառատոնը նպատակն է նպաստել Հայաստանում համաշխարհային ժամանակակից երաժշտության տարածմանն ու զարգացմանը:

Փառատոնի շրջանակում այս տարի կկազմակերպվի 5 համերգ, որոնք կանցկացվեն «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, Կամերային երաժշտության ազգային կենտրոնում, ՀԲԸՄ Հայաստան դահլիճում, Դիլիջանի միջազգային դպրոցում եւ «The Office»-ում:

Փառատոնի բացման համերգը տեղի կունենա ապրիլի 29-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում: Ասոնանս անսամբլը կներկայացնի Արամ Հովհաննիսյանի, Ալիսիա Թերզյանի, Արթուր Աւարոնյանի, Արսեն Բաբաջանյանի, Ֆրանկ Քրիստոֆ Եզնիկյանի, Ստեփան Ռոստոմյանի ստեղծագործությունները:

Մայիսի 2-ին ՀԲԸՄ դահլիճում Երեւանի պետական կոնսերվատորիայի «Բումերանգ» անսամբլը կներկայացնի Միքայել Մելիք-Վարդանյանի, Լեւոն Պողոսյանի, Վահրամ Բաբայանի, Նարինե Մխիթարյանի, Ռալֆ Քյոշքերյանի, Արամ Սաթյանի, Գոռ Խսպիրյանի, Վաչե Շարաֆյանի գործերը:

Մայիսի 4-ին Դիլիջանի միջազգային դպրոցում (UWC Dilijan) Երեւանի պետական կոնսերվատորիայի «Բումերանգ» անսամբլը կկատարի Միքայել Մելիք-Վարդանյանի, Ռալֆ Քեոշքերյանի, Գոռ Խսպիրյանի, Լեւոն Պողոսյանի եւ Նարինե Մխիթարյանի գործերը:

Մայիսի 7-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը դաշնակահար, ՀՀ վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանը կներկայացնի հեղինակային, ինչպես նաեւ Ալան Հովհաննեսի, Գեղունի Չթչյանի, Տիգրան Մանսուրյանի, Մարտուն Իսրայելյանի, Վարդան Աճեմյանի, Արթուր Ավանեսովի, Ռուբեն Անտոնյանի, Էլեն Յուլյանի ստեղծագործությունները:

Մայիսի 11-ին Առնո Բաբաջանյան» համերգասրահում «Երեւան» լարային քառյակը կկատարի Սուրեն Զաքարյանի, Աննա Հակոբջյանյանի, Արփինե Կալինինայի, Միխայիլ Կոկժաեւի գործերը, իսկ մայիսի 14-ին փառատոնային կրթական ծրագրերի շրջանակում երաժշտագետ, ձայնային տեսաբան Գաշիա Ուզունյանը վարպետության դաս կանցկացնի կոնսերվատորիայի ուսանողների համար ակուստիկ լաբորատորիայում:

Մայիսի 16-ին «The Office»-ում կայանալիք համերգին կմիավորվի էլեկտրոնային եւ դասական երաժշտությունը՝ Անդրիուս Հարությունյանի ղեկավարությամբ: Կհնչեն Սերգեյ Ումրոյանի եւ Անդրիուս Հարությունյանի ստեղծագործությունները:

Փառատոնի ծրագիրն ամեն տարի երաժշտասերներին հնարավորություն է տալիս հետեւել արդի ժամանակակից դասական երաժշտության զարգացումներին եւ միտումներին:

Այն նաեւ նպաստում է նոր ստեղծագործությունների ստեղծմանը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԱՈՒԹԵՆՏԻԿ ԼԱՅԹ ՕՐՔԵՍՏՐԱ»

ՓԱՐԱՋԱՆՈՎԻ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ՀԱՄԱՐ

Շվեյցարական «Աութենտիկ լայթ օրքեստրա»-ն հանդես կգա երեւանյան համերգով:

«Էթնո ջազ» խորագրով երեկոն տեղի կունենա մայիսի 2-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Համերգը նվիրվում է Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյանին:

Համերգին հայկական մեղեդիները կհանդիպեն ջազի դյութիչ իմպրովիզացիաներին:

«Աութենտիկ լայթ օրքեստրա»-ի երաժշտական ղեկավար Վալերի Տոլստովի ղեկավարությամբ խումբը ստեղծում է յուրահատուկ մշակումներ՝ միահյուսելով դուդուկի, ջազի եւ շեփորի հնչյունները:

2012 թվականից ի վեր խումբը շուրջ 300 համերգ է ունեցել 54 քաղաքում: 2014 թվականին արժանացել է «Armvision» մրցույթի գլխավոր մրցանակին՝ ժողովրդական երգի լավագույն մշակման եւ կատարման համար: 2016 թվականին Սերժ Թանկյանի հետ ձայնագրել է հոլիվուդյան «The Promise» ֆիլմի սաունդթրեքը: Այն ձայնագրվել է «Աութենտիկ լայթ օրքեստրան»-ի եւ «String Orchestra»-ի հետ Մոսկվայում՝ «Mosfilm»-ի ստուդիայում:

2016 թվականին խումբը ստացել է առաջին ռուսական համաշխարհային երաժշտական մրցանակը:

Խմբի մենակատարներն են Վալերի Տոլստովը (Շվեյցարիա /ֆլեյտա, երգեհոն), Եվգենի Լեբեդեւ (Ռուսաստանի Դաշնություն /դաշնամուր), Անտոն Ռեւնուկը (Ռուսաստանի Դաշնություն /բաս, կոնտրաբաս), Անյա Կորյցերը (Շվեյցարիա /ֆլեյտա), Արման Մնացականյանը (հարվածային գործիքներ), Միքայել Ոսկանյանը (թառ), Գրիգոր Սարունց-Քարտաշյանը (դուդուկ, բլուլ, զուռնա), Հայկ Գրիգորյանը (շեփոր), Աստղիկ Վարդանյանը (առաջին ջութակ), Գոհար Պապոյանը (երկրորդ ջութակ), Աստղիկ Գաժոյանը (ջութակ), Արտյոմ Մանուկյանը (թավջութակ):

Համերգին մասնակցում են նաեւ Զալնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոցի սաները, խմբավար՝ Էմմա Առաքելյան:

Համերգն իրականացվում է «Նյու ջեներեյշն փրոջեքթ»-ի նախաձեռնությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՎԱՃԵՑԻՆ 9 ՄԵԴԱԼ

Երեւանում անցկացվող սամբոյի աշխարհի գավաթի խաղարկության առաջին մրցութային օրը Հայաստանի հավաքականի ու արցախցիները նվաճեցին 9 մեդալ՝ 3 արծաթ եւ 6 բրոնզ:

Արծաթե մեդալակիրներ դարձան Արթուր Մանուկյանը (64 կգ), Կարլեն Մահինյանը (71 կգ) եւ փախստականների դրոշի ներքո հանդես եկող արցախցի Դավիթ Հովսեփյանը (58 կգ):

Բրոնզե մեդալակիրներ դարձան Կարեն Սարգսյանը (58 կգ), Արթուր Հակոբյանը (79 կգ), Գրիգոր Բեկնազարյանը (98 կգ), Իռենա Պետրոսյանը (54 կգ), Արփինե Մնացականյանը (54 կգ) եւ Արբուհի Հովակիմյանը (59 կգ):

Առաջին մրցումային օրվա եզրափակիչ գոտեմարտերի ավարտից հետո տեղի ունեցավ հաղթողների եւ մեդալակիրների պարգեւատրման արարողությունը:

71 կգ քաշայինների պարգեւատրման արարողության ժամանակ բրոնզե մեդալ նվաճած ուկրաինացի մարզիկը հրաժարվեց ընդհանուր լուսանկարից: Երբ բոլոր մեդալակիրները կանգնեցին պատվո հարթակին, ուկրաինացի սամբիստը չմոտեցավ մյուս մեդալակիրներին եւ չկանգնեց ոսկե մեդալ նվաճած ռուս սամբիստի կողքին:

Աշխարհի գավաթի խաղարկությունում ռուս սամբիստները մասնակցում են FIAS-ի դրոշի ներքո:

Հիշեցնենք, որ այս քաշային կարգում արծաթե մեդալակիր էր դարձել Հայաստանի ներկայացուցիչ Կարլեն Մահինյանը:

Ապրիլի 5-ին երկրորդ մրցումային օրը պայքարի մեջ կմտնեն տղամարդկանց մարտական սամբոյի 58 կգ, 64 կգ, 71 կգ, 79 կգ, 88 կգ, 98 կգ եւ +98 կգ քաշային կարգերի ներկայացուցիչները եւ կանանց սամբոյի 50 կգ, 54 կգ, 59 կգ, 65 կգ, 72 կգ, 80 կգ, +80կգ քաշային կարգերի ներկայացուցիչները:

Աշխարհի գավաթը կավարտվի ապրիլի 5-ին:

ՊԱՐՏՎԵՑ 3:4 ՀԱՇՎՈՎ

Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջնության 31-րդ տուրում «Մանչեսթեր Յունայթեդը» հյուրընկալվեց Լոնդոնի «Չելսիին» եւ պարտվեց 3:4 հաշվով:

«Չելսին» արդեն չորրորդ րոպեին բացեց հանդիպման հաշիվը անգլիացի կիսապաշտպան Քոնոր Գալագերի գոլի շնորհիվ: 19-րդ րոպեին դաշտի տերերի առավելությունը կրկնապատկեց անգլիացի կիսապաշտպան Քոուլ Փալմերը, որն արդյունավետ իրացրեց 11-մետրանոցը:

Մինչեւ ընդմիջում «Մանչեսթեր Յունայթեդը» կարողացավ վերականգնել հավասարությունը: Աչքի ընկան արգենտինացի կիսապաշտպան Ալեխանդրո Գառնաչոն եւ պորտուգալացի կիսապաշտպան Բրունու Ֆերնանդեշը: 67-րդ րոպեին Ալեխանդրո Գառնաչոն խփեց նաեւ իր երկրորդ գոլը:

«Չելսիին» պարտությունից փրկեց Քոուլ Փալմերի գոլն ավելացված 10-րդ րոպեին: Նա դարձյալ աչքի ընկավ 11-մետրանոցից: Մեկ րոպե անց էլ Փալմերը խփեց հաղթական գոլը:

30 խաղից հետո «Մանչեսթեր Յունայթեդը» 48 միավորով 6-րդն է: «Չելսին» անցկացրել է 29 հանդիպում եւ 10-րդ տեղում է՝ 43 միավոր:

● *Ապրիլի 16-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԼԻԶԻՆԳ

ՀԱՐՑ. Հնարավո՞ր է արդյոք լիզինգով ձեռք բերել նաեւ ագրոպարենային ոլորտի սարքավորումներ:

Իրինա Գասպարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2018 թվականի հուլիսից մեկնարկել է «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիրը, որի հիմնական նպատակը ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է: Լիզինգը տրամադրվում է դրամով մինչեւ 8 տարի ներառյալ մարման ժամկետով, տարեկան մինչեւ 11 տոկոս տոկոսադրույքով, որի մինչեւ 7 տոկոսային կետը սուբսիդավորում է, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 4 տոկոս, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 11 տոկոսային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոսի չափով կանխավճար: Ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 450.0 մլն դրամը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել տարակարգ ստանալու համար:

Աշոտ Ալավերդյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքը ուժի մեջ է մտել 2022 թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝մարտի 3-ից սկսած՝տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Օլիմպիական խաղերի չեմպիոն, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը նշում է ծննդյան 60-ամյակը:

Լեգենդար մարզիկը Սեուլի օլիմպիական խաղերի (1988 թվական), Եվրոպայի (1986 թվական), աշխարհի (1986 թվական) չեմպիոն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Գիշեր / Ցերեկ
Շիրակ	- 3 - 7 / +14 + 18
Կոտայքի լեռներ	- 3 - 6 / +14 + 17
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 / +21 + 23
Գեղարքունիք	- 3 - 6 / +13 + 16
Լոռի	- 1 + 3 / +17 + 21
Տավուշ	- 1 + 2 / +18 + 22
Արագածոտնի լեռներ	0 + 3 / +14 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 / +21 + 24
Արարատ	+ 2 + 5 / +24 + 26
Արմավիր	+ 1 + 4 / +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 / +21 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 / +24 + 26
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 / +24 + 26
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 / +23 + 25
ԼՂՀ	- 1 + 3 / +22 + 24
Երեւան	+ 6 + 8 / + 18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*